

ԱՐՏԱՀԱՆՍԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱ-Ի
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Տնտեսական ճգնաժամերն ամենևին էլ նոր երևույթ չեն մարդկության պատմության մեջ: Դրանք ունեն բավականին հարուստ պատմություն: Ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամը սկսվեց ԱՄՆ-ի հիփոթեքային շուկայից 2007թ. ամռանը և տարածվեց ամբողջ աշխարհում: Քանի որ ԱՊՀ երկրների ֆինանսական շուկաները մեծ չափով ինտեգրված չէին համաշխարհայինին, ապա ճգնաժամի առաջին ալիքն այնքան էլ չազդեց այս երկրների վրա: Միայն Ղազախստանում¹, որի բանկային համակարգն այդ ժամանակ ԱՊՀ-ում ամենագարգացածներից էր, արտաքին պարտքը կտրուկ մեծացավ: Բացի այդ, երկրում ակնհայտ «պղպջակ» գոյացավ նաև անշարժ գույքի շուկայում: Այսպիսով, Ղազախստանը ԱՊՀ երկրներից միակն էր, որ ճգնաժամի ազդեցությունը զգաց հենց առաջին փուլի ժամանակ:

Ճգնաժամի ժամանակ արդեն ի հայտ եկան ԱՊՀ բոլոր երկրների տնտեսությունների բոլոր կողմերը՝ ՀՆԱ-ի աճ ոչ արդյունավետ ճյուղերի հաշվին, արտաքին առևտրի ոչ դիվերսիֆիկացում, տնտեսության զարգացման հեռանկարային ոլորտների սխալ ընտրություն և այլն: Ինչի արդյունքում էլ յուրաքանչյուր երկրում ճգնաժամն ունեցավ իր յուրահատուկ դրսևորումները և հետևանքները:

Նախ ցույց տանք արտահանման կառուցվածքի ազդեցությունը ՀՆԱ փոփոխությունների վրա ԱՊՀ հանրապետություններում, որից հետո էլ պարզ կլինի ճգնաժամի ժամանակ յուրաքանչյուր երկրում դրսևորված յուրահատկությունը:

Ռեգրեսիոն վերլուծություն կատարելով 2000-2007թթ. ԱՊՀ հանրապետությունների իրական ՀՆԱ-ի և իրական արտահանման² միջև՝ կստանանք արտահանման գործակիցը, որը ցույց կտա, թե այլ հավասար պայմաններում արտահանման 1% փոփոխությունը ՀՆԱ-ի որքան փոփոխության է բերում:

Ռեգրեսիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը՝ $GDP = c + a \cdot Export + \varepsilon$,

որտեղ GDP-ն իրական ՀՆԱ-ն է, c-ն՝ հաստատումը, Export-ը՝ իրական արտահանումը, a-ն՝ արտահանման գործակիցը, իսկ ε -ը՝ ստանդարտ սխալը:

Ընդ որում, տվյալ պարագայում մեզ հետաքրքրում է արտահանման գործակցի ոչ թե մեծությունը, այլ դրա 1-ից մեծ կամ փոքր լինելու հանգամանքը: Եթե երկրի արտահանման գործակիցը մեծ է 1-ից, կարող ենք պնդել, որ տվյալ երկիրն արտահանում է այնպիսի արտադրանք, որի արտադրությունը նպաստում է նաև տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը և հակառակը, եթե գործակիցը 1-ից փոքր է (նման դեպքում սովորաբար երկիրն արտահանում է հումք կամ նավթամթերք):

Ռեգրեսիայի արդյունքները ցույց են տալիս, որ.

- արտահանման գործակիցները Հայաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում տատանվում են 0.71-0.76 միջակայքում, ինչը Հայաստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի պարագայում նշանակում է, որ այս երկրների արտահանման հիմնական մասը կազմում են հանքահումքային արտա-

¹ 2007թ. Ղազախստանի բանկային համակարգի ակտիվները ՀՆԱ-ի հարաբերակցությամբ կազմում էին 93%, որն ամենաբարձր ցուցանիշն էր ԱՊՀ երկրների շրջանակում (տե՛ս Ինտերֆաքս-1000. ԱՊՀ երկրների բանկերը, 2007թ. ամփոփում):

² <http://www.worldbank.org/> - GDP & Exports of goods and services by countries (constant 2000 US\$).

դրանքը և մետաղները: 2000-2007թթ. Հայաստանի արտահանման 70%-ից ավելին կազմում են թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներն ու հանքահումքային արտադրանքը: Վերջին տարիների ընթացքում Հայաստանում էական տնտեսական աճի պայմաններում տեղի է ունեցել մրցունակության անկում՝ չափված ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից թողարկվող Մրցունակության համաշխարհային զեկույցի: ՀՆԱ-ի աճը՝ նվազող մրցունակության զուգակցմամբ դրսևորվում է փոքրաթիվ երկրներում (ԱՊՀ երկրներից՝ Հայաստանում, Ադրբեջանում և Ղազախստանում): Տնտեսության հետագա զարգացման հեռանկարները բավականին վատատեսական են այն երկրներում, որտեղ ՀՆԱ-ի աճը զուգակցվել է մրցունակության անկմամբ, բացառությամբ ռեսուրսափնտեսիվ տնտեսությունների, ինչպիսին է ԱՊՀ երկրներից Ադրբեջանը:

Նույն ժամանակահատվածում Ռուսաստանում, Ադրբեջանում, Ղազախստանում, Տաջիկստանում և Թուրքմենստանում հանքահումքային արտադրանքի և ոչ թանկարժեք մետաղների տեսակարար կշիռը յուրաքանչյուր երկրի ընդհանուր արտահանման մեջ գերազանցել է 60%-ը: Ռուսաստանում մետաղներն և հանքահումքային արտադրանքը կազմել են արտահանման 70%-ից ավելին: Տաջիկստանի արտահանման մեջ հաջորդ համեմատաբար զարգացած ոլորտները հանդիսանում են չվերամշակված բամբակի և էլեկտրաէներգիայի արտահանումը, որոնց արտադրությունը ևս չի նպաստում տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը: Ուզբեկստանի արտահանման հիմնական մասը կազմում են չվերամշակված բամբակն ու մետաղները: Հատկապես Ադրբեջանի (Ադրբեջանի արտահանման 75%-ից ավելին կազմում է նավթը), իսկ մասնավորապես Ռուսաստանի համար (Ռուսաստանի արտահանման մեջ 3-րդ տեղում նավթն է) այս ցուցանիշը նշանակում է, որ արտահանման մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունի նավթը:

- Արտահանման գործակիցը Բելառուսում, Ուկրաինայում և Ղազախստանում մեծ է մեկից: Եվ եթե Ղազախստանի պարագայում դա կարելի է բացատրել զարգացած ֆինանսական շուկայով, ապա Ուկրաինայի և Բելառուսի դեպքում հենց արտահանման կառուցվածքն է էական: Այս 2 երկրներում էլ արտահանման մեջ հանքահումքային արտադրանքն ու մետաղները չեն գերազանցում արտահանման 50%-ը: Բելառուսում արտահանման 40%-ը հանքահումքային արտադրանքը և մետաղներն են, 20%-ը՝ քիմիական արտադրանքը, 16%-ը՝ մեքենա-սարքավորումները, իսկ Ուկրաինայում մոտ 50%-ը՝ մետաղներ և հանքահումքային արտադրանք, 20%-ը՝ մեքենա-սարքավորումներ, 12%-ը՝ սնունդ և ծխախոտ, այսինքն՝ չնայած արտահանման մեջ 40-50% կազմում են կրկին հանքահումքն ու մետաղները, սակայն այս երկրների արտահանման մեջ դրանց հաջորդող արտադրատեսակներն այնպիսին են, որ նպաստում են նաև տնտեսության այլ ոլորտների զարգացմանը:
- Արտահանման գործակիցը Մոլդովայում և Ղրդստանում փոքր է նույնիսկ 0,5-ից, ինչը վկայում է, որ այս երկրներում արտահանումը դեռևս նոր է սկսում զարգանալ (այս երկրների արտահանումը ԱՊՀ երկրների ընդհանուր արտահանման մեջ ամենափոքր տոկոսն է կազմում:)

Շգնաժամի 2-րդ փուլը, որն ընդգրկեց արդեն ԱՊՀ երկրների մեծ մասը, սկսվեց 2008թ. ամռանը և տարածվեց հիմնականում հետևյալ ուղիով.

- Ջարգացող երկրներից օտարերկրյա կապիտալի արտահոսք:
- Դեպի զարգացած երկրներ արտահանման կրճատում, որն էլ շղթայաբար բերեց հումքային ապրանքների գների անկում: Բանի որ ԱՊՀ երկրները հիմնականում հումք կամ

քիչ վերամշակված ապրանք արտահանողներ են, ապա նրանց արտահանած ապրանքների գների կրճատումը հանգեցրեց նրանց արտաքին առևտրի զգալի կրճատման: 2009թ. առաջին կեսին արտաքին առևտրի զգալի կրճատումն ակնհայտ էր արդեն շատ երկրներում. 2009թ. արտաքին առևտուրը կազմում էր 2008թ. առևտրի մի մասը՝ Ուկրաինայում 53,2%, Ռուսաստանում՝ 64,3%, Ղազախստանում՝ 52,8%, Բելառուսում՝ 65,34%, Հայաստանում՝ 67,2%:

- Արտահանման ծավալների, ինչպես նաև հիմնական արդյունաբերական ճյուղերում արտադրության կրճատման հետևանքն էր աշխատավարձերի իջեցումը և/կամ գործազրկության մեծացման, ինչն էլ հանգեցրեց ներքին սպառողական պահանջարկի կրճատման: Այս ամենին ԱՊՀ երկրներում ավելանում է ևս մի յուրահատկություն՝ տրանսֆերտների կրճատումը:
- Արտաքին գործոնների և օտարերկրյա արժույթի նկատմամբ պահանջարկի մեծացման ազդեցությամբ երկրների ներսում սկսեց նկատվել ազգային արժույթի արժևորման միտում:
- Բնական է, որ կրճատվեցին ՀՆԱ-ն և արդյունաբերական արտադրությունը: Այս տեսանկյունից ամենից շատ ԱՊՀ երկրների շրջանակում տուժել են Հայաստանը, Ղազախստանը, Մոլդովան, Ռուսաստանը և Ուկրաինան:

ԱՊՀ երկրներում ճգնաժամի ալիքը տարածվեց 2 ձևով. նախ՝ համաշխարհային շուկայում պահանջարկի և գների մակարդակի անկման տեսքով, ապա՝ ԱՊՀ երկրների տեղական շուկաներում, հատկապես Ռուսաստանի, պահանջարկի նվազման տեսքով¹:

ԱՊՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2009թ. 2008թ. հետ համեմատած ներտարածաշրջանային արտահանման ընդհանուր ծավալը կրճատվել է 43%-ով: Դեպի ԱՊՀ երկրներ արտահանման ծավալներն ամենաշատը կրճատվել են Ուկրաինայում (41,8%-ով), Հայաստանում (44,18%-ով), Բելառուսում (35%-ով), Ղազախստանում (38,51%-ով), Ռուսաստանում (32,58%-ով): Ամենաքիչը կրճատվել է Մոլդովայի (20,46%) և Տաջիկստանի (8,8%) արտահանումը:

ԱՊՀ երկրների արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների վրա ճգնաժամային երևույթների ազդեցության վերլուծությունը թույլ է տալիս մի քանի հետևություններ անել.

- նախ անհրաժեշտ է նշել, որ արտահանման կրճատման հարցում առավել զգալի եղավ համաշխարհային ճգնաժամի էֆեկտը. արտահանման ընդհանուր ծավալների կրճատմանը ներտարածաշրջանային առևտուրը նպաստել է 1/5-ով, իսկ 4/5-ով այն կրճատվել է ոչ տարածաշրջանային գործոնների հաշվին:
- Արտաքին առևտրի կրճատման հետևանքով մեծացավ ներտարածաշրջանային երկրների առևտրի տեսակարար կշիռը որոշակի գործոնների ազդեցությամբ՝ ԱՊՀ երկրների ապրանքային կառուցվածքի յուրահատկությունը, ԱՊՀ ներտարածաշրջանային շուկայում գնագոյացման յուրահատկությունը և այլն:
- Զանի որ ԱՊՀ ներտարածաշրջանային արտահանման դինամիկայի յուրահատկությունը հիմնականում պայմանավորված էր ներտարածաշրջանային առևտրում այդ ապրանքների համեմատաբար ցածր տեսակարար կշիռով՝ կապված ԱՊՀ երկրների արտահանման կրճատման հիմնական պատճառ հանդիսացող համաշխարհային

¹ 2007թ. տվյալներով ԱՊՀ առանձին երկրների արտաքին առևտրում ԱՊՀ տեսակարար կշիռը միայն Ռուսաստանում է եղել 25%-ից ցածր:

շուկայում նախ և առաջ ցածր ավելացված արժեքով ապրանքների պահանջարկի և գնային մակարդակի անկման հետ (հումքային ապրանքներ, մետալուրգիական և քիմիական ապրանքներ): Իհարկե, ԱՊՀ երկրների ներտարածաշրջանային առևտրի մեջ հանքահումքային արտադրանքն ունի զգալի ծավալ՝ 35,9%, այն դեպքում, երբ մեքենա-սարքավորումների տեսակարար կշիռը կազմում է 20,7%, այսուհանդերձ, հանքահումքային արտադրանքը կազմում է դեպի ոչ ԱՊՀ երկրներ առևտրի 70,5%-ը, իսկ մեքենա-սարքավորումներին բաժին է ընկնում ընդամենը 2,8%-ը¹:

- Ընդհանուր առևտրում ներտարածաշրջանային առևտրի տեսակարար կշռի մեծացման համար կարևոր գործոն էր ԱՊՀ երկրների, հատկապես Ռուսաստանի, հակաճգնաժամային միջոցների կիրառումը, որոնք ուղղված էին ոչ ԱՊՀ երկրներից ներմուծման կրճատմանը: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ տարածաշրջանի ներսում մեծացավ ԱՊՀ երկրների ապրանքների մրցունակությունը համեմատած ոչ ԱՊՀ երկրների հետ:

Դիտարկենք ճգնաժամի ազդեցությունը ԱՊՀ երկրների վրա՝ ՀՆԱ-ի տեսանկյունից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի և արտահանման դինամիկան 2007-2009թթ.
(% նախորդ տարվա համեմատ)**

Երկրներ	2007		2008		2009	
	ՀՆԱ	Արտահանում	ՀՆԱ	Արտահանում	ՀՆԱ	Արտահանում
Ադրբեջան	125	95.1	110.8	788.27	109.3	30.78
Հայաստան	113.8	117	106.8	92.8	85.6	67.2
Բելառուս	108.6	123	110	135.5	100.2	65.34
Ղազախստան	108.9	124.8	103.3	149.1	101.2	52.8
Դրոգստան	108.5	148.3	107.6	124.3	102.3	77.69
Մոլդովա	103	127.6	107.2	119.1	93.5	80.9
Ռուսաստան	108.1	116.8	105.6	133	92.1	64.3
Տաջիկստան	107.8	104.9	107.9	95.8	103.4	71.83
Ուկրաինա	107.9	128.5	102.1	135.9	85	53.2

ԱՊՀ դիտարկված գրեթե բոլոր հանրապետություններում 2007-2008թթ. ՀՆԱ-ն դեռևս աճում էր, ճիշտ է՝ նվազող տեմպերով, ինչը ցույց է տալիս, որ ճգնաժամի առաջին փուլը ԱՊՀ երկրների վրա զգալի ազդեցություն չունեցավ: 2009թ. արդեն ԱՊՀ որոշ հանրապետություններում ՀՆԱ-ն սկսեց նվազել՝ Հայաստանում՝ 14.4%-ով, Մոլդովայում՝ 6.5%-ով, Ռուսաստանում՝ 7.9%-ով, Ուկրաինայում՝ 15%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների անկում 2009թ. գրանցվեց ԱՊՀ գրեթե բոլոր հանրապետություններում, բացառությամբ Ադրբեջանի և Ղազախստանի:

Ճգնաժամի ընթացքում ԱՊՀ մի շարք երկրներում ՀՆԱ-ի կրճատման կարևոր նախադրյալ հանդիսացավ արտերկրից՝ հատկապես այլ ԱՊՀ հանրապետությունից, դրամական փոխանցումների կրճատումը: 2000-2007թթ. հետխորհրդային երկրներում դրամական փոխանցումների աճի տեմպերը տարեկան կազմում էին 25-35%, 2008թ. առաջին անգամ

¹ ԱՊՀ Վիճակագրական ծառայության 2008թ. տվյալներ:

դրանց աճի տեմպը նվազեց, իսկ 2009թ. առաջին կիսամյակում արդեն գրանցվեց դրամական փոխանցումների կրճատում՝ համեմատած 2008թ. նույն ժամանակահատվածի հետ:

Ներկայիս տնտեսական ճգնաժամը տեսանելի դարձրեց Հայաստանի տնտեսության խոցելիությունը, որն արտահայտվում է տնտեսության հետևյալ բնորոշիչ գծերով.

- Աճի ոչ կայուն շարժիչ ուժեր:
- Արտահանման սահմանափակ և հիմնականում հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածք:
- Մասնավոր տրանսֆերտներից զգալի կախվածություն:
- Ճգնաժամի ազդեցության արագ տեղափոխումը Հայաստան ցույց տվեց վերջինիս բավական զգայունությունն արտաքին շուկերի նկատմամբ: 2009թ. Հայաստանը ճգնաժամի արդյունքում ՀՆԱ-ի ամենաշատ անկում գրանցած երկրների շարքում էր՝ 14.4%:

Հայաստանում ճգնաժամն ունեցավ յուրահատուկ դրսևորումներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- Վերջինիս տարածման արագությանը հատկապես նպաստեց տնտեսության ցածր դիվերսիֆիկացման աստիճանը:
- Ի տարբերություն այլ երկրների, որտեղ ճգնաժամը սկիզբ առավ ֆինանսական շուկայում ցնցումներից, Հայաստանում այն սկսվեց իրական հատվածում պայմանավորված պղնձի և մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկմամբ:
- Տնտեսական անկման հետագա խորացումը խթանեց մասնավոր տրանսֆերտների նվազումը և շինարարության ոլորտում կտրուկ անկումը:

Սկսած 2000թ. կեսերից՝ առաջ եկան ՀՀ տնտեսության խոցելի կողմերը: Կախվածությունը դրամական փոխանցումներից և կապիտալի հոսքերից աճեց այս տարիներին ընդհանուր առմամբ առևտրի ոլորտի և մասնավորապես արտահանման աճի դանդաղելու պայմաններում: Շինարարությունը և ծառայությունները դարձան աճին նպաստող հիմնական ոլորտները: Բարձր և արագացող տնտեսականի աճի ժամանակաշրջանի ավարտին՝ 2008թ., ՀՆԱ-ի աճը 2008թ. առաջին երեք եռամսյակներում արձանագրված 10 տոկոսից դանդաղեց մինչև 6.8 տոկոսը: 2008թ. չորրորդ եռամսյակում աճը եղել է բացասական՝ առաջին եռամսյակային անկումը սկսած 1994թ.: Այն ժամանակվանից անկումն արագացել է: Անշարժ գույքի ոլորտը՝ վերջին տարիներին աճի ամենամեծ նպաստողը, կտրուկ անկում է ապրել, ինչպես և հանքարդյունաբերությունը և մետաղների արտադրությունը: Մյուս հատվածները (օրինակ, Հայաստանի փոքր, բայց աճող ՏՏ ճյուղը) նույնպես ճնշման տակ են: Գործազրկությունը կտրուկ աճել է, քանի որ փակվել են պղնձի և մոլիբդենի բազմաթիվ հանքավայրեր՝ ավելացնելով ճնշումը գյուղական տնտեսության, սոցիալական ապահովության համակարգի և հարկային մուտքերի վրա: Հայաստանի արտաքին հաշվեկշիռն էականորեն վատթարացել է՝ սկսած 2007թ.՝ 2008թ. ունենալով ՀՆԱ-ի նկատմամբ մոտ 11 տոկոսի չափով ընթացիկ հաշվի պակասուրդ և ՀՆԱ-ի նկատմամբ 25 տոկոսը գերազանցող առևտրային պակասուրդ: Արտահանումը ծավալային առումով սկսեց նվազել 2006 թվից, սակայն արտահանման թույլ ցուցանիշները քողարկվել էին գումարվոր մետաղների՝ Հայաստանի արտահանման հիմնական ապրանքային խմբի նպաստավոր գներով: Ներմուծման աճը, մյուս կողմից, շատ մեծ է եղել՝ պայմանավորված դրամական փոխանցումներով, ՕՈՒՆ-ներով, առևտրային բանկերի արտաքին փոխառություններով և իրական փոխարժեքի արժևորմամբ: 2008թ. վերջին եռամսյակում արտաքին միջավայրի կտրուկ վատթարացումն արտահայտվել է արտահան-

ման ավելի քան 40 տոկոսանոց անկումով 2009թ. առաջին եռամսյակում (արտահայտված ԱՄՆ դոլարով):

2010թ. արդեն նկատվում է տնտեսական կայունացում և աճ ԱՊՀ գրեթե բոլոր հանրապետություններում: Համաշխարհային տնտեսության աճը, նավթի և գազի գների աճը նախապայման հանդիսացան տնտեսական ակտիվության վերականգնման այնպիսի երկրներում, որոնք էներգառեսուրսների արտահանողներ են (Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, Թուրքմենստան): Սրան զուգահեռ անհրաժեշտ է նշել, որ համեմատաբար բաց, և, հետևաբար, ճգնաժամից առավել շատ տուժած երկրները (Ռուսաստան, Ղազախստան) ավելի դանդաղ են վերականգնվում, հակառակ երևույթն է դիտվում համեմատաբար փակ տնտեսությամբ երկրներում (Ադրբեջան, Թուրքմենստան):

Էներգառեսուրսների չտիրապետող երկրներում (Ուկրաինա, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան) տնտեսական զարգացումը և դրա հետագա հնարավորությունները զգալիորեն կախված են տվյալ երկրի յուրահատկությունից: Օրինակ՝ Ուկրաինայի տնտեսական աճի համար նախ անհրաժեշտ է քաղաքական իրավիճակը կայունացնել, Գրդաստանի, Տաջիկստանի, Մոլդովայի, Հայաստանի տնտեսությունները զգալիորեն կախված են միգրանտների դրամական փոխանցումներից: Վրաստանի և Հայաստանի հետագա զարգացման համար կարևորվում են օտարերկրյա ներդրումները, տնտեսության մեջ արտադրության և արտահանման դիվերսիֆիկացումը:

2010 թվականի անցած ամիսների փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տարվա առաջին կիսամյակում ՀՀ-ում արձանագրվում է տնտեսության վերականգնում, որը հանգեցնում է մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման՝ ձևավորելով լավատեսական սպասումներ: 2010 թվականի հունվար-հունիս ամիսներին գրանցվել է 6.7% տնտեսական աճ, որն արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության: Տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության աճ, հատկապես գրանցելով բարձր արտահանման աճ՝ 55.9%: Հետճգնաժամային աճի համար ամուր հիմքեր նախապատրաստելու նպատակով կառավարությունը սահմանել է հիմնական գործողություններ և խթաններ կորպորատիվ կառավարման, տնտեսական մրցակցության, ձեռնարկությունների գրանցման, տեսչական ստուգումների և պետական-մասնավոր համագործակցության ոլորտներում, որն էլ, հուսանք, կտա անհրաժեշտ արդյունք: